ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«21» Հուլիսի 2014թ                                        թիվ 1

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի գյուղական համայնքի ավագանու թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ՝ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա. Բեգլարյան | | | |
| Հ. Ասատրյան | | | |
| Հ. Շահնազարյան | | | |
| Ա. Ալոյան | | | |
| Ղ. Ղարիբյան | | | |
| Գ. Գրիգորյան | | | |
| Տ.Մարկոսյան | | | |

Արևիկի գյուղական համայնքի ղեկավար՝ Գառնիկ Ծատուրյան

2014թվականի հուլիսի «21»
գ. Արևիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014Թ. ՀՈՒԼԻՍԻ 21-Ի ԹԻՎ 1
ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի գյուղական համայնքի ավագանու թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

/Զեկուցող՝համայնքի ղեկավար Գառնիկ Ծատուրյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի ԲԱ բաժնետիրական ընկերությունը Արևիկի ԲԱ համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմավորելու մասին:

/Զեկուցող՝համայնքի ղեկավար Գառնիկ Ծատուրյան

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների քանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին :

/Զեկուցող՝համայնքի ղեկավար Գառնիկ Ծատուրյան

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելու մասին :

/Զեկուցող՝համայնքի ղեկավար Գառնիկ Ծատուրյան

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելու մասին:

/Զեկուցող՝աշխատակազմի քարտուղար՝ Սամվել Առաքելյան

6. Համաձայնություն տալու մասին:

/Զեկուցող՝համայնքի ղեկավար Գառնիկ Ծատուրյան

7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկ գյուղական համայնքի կենսապահովման խնդիրների լուծման համար անհրաժեշտ աշխատակիցների քանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին :

/Զեկուցող՝համայնքի ղեկավար Գառնիկ Ծատուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ**

**ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

---

« 21 » ՀՈՒԼԻՍԻ 2014թ. Թիվ 2 -Ն

## ԱՐԵՎԻԿԻ ԲԱ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԻԿԻ ԲԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 63-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 14-րդ մասի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Արևիկի ԲԱ փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) վերակազմավորման ձևով որպես Արևիկի ԲԱ համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմավորելու մասին համայնքի ղեկավարի 2014 թվականի հուլիսի 21-ի N88 որոշումը:
2. Ընկերության շենքերն ու շինությունները, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքն ընդունել Արմավիրի մարզի Արևիկի գյուղական համայնքի համայնքային հաշվեկշիռ՝ համաձայն հավելված 1-ի (այսուհետ՝ Հավելված 1):
3. Ընկերության շենքերն ու շինությունները, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքն համաձայն Հավելված 1-ի անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՈԱԿ-ին՝ դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝ Արմավիրի մարզի Արևիկի գյուղական համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա:
4. Ընկերության տնօրինության տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ բացառությամբ շենքի ու շինությունների, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքի, սեփականության իրավունքով հանձնել ՀՈԱԿ-ին՝ որպես իրավահաջորդի:

5. Հաստատել`
   ա/ ՀՈԱԿ-ի գույքի կազմը` համաձայն Հավելված 2-ի:
   բ/ ՀՈԱԿ-ի կանոնադրությունը` համաձայն հավելված 3-ի:

6.Առաջարկել համայնքի ղեկավարին` Սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել ՀՈԱԿ-ի պետական գրանցումը` Ընկերության միջոցների հաշվին:

7.Կազմակերպության կառավարման, ինչպես նաև` «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «է» ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Արմավիրի մարզի Արևիկի գյուղական համայնքի ղեկավարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ`

| | ԿՈՂՄ | ԴԵՄ |
|---|---|---|
| 1.ԱՇՈՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ | | |
| 2.ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ | | |
| 3.ՂՈՒԿԱՍ ՂԱՐԻԲՅԱՆ | | |
| 4.ՀՐԱՉԻԱ ԱՍՏՐՅԱՆ | | |
| 5.ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | |
| 6.ԱԼԻ ԱԼՈՅԱՆ | | |
| 7.ՀԱԿՈԲ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԳԱՌՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ

2014 թվականի հուլիսի 21 գ. Արևիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 21 » ՀՈՒԼԻՍԻ 2014թ. Թիվ 3 -Ն

## ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի գյուղապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N1 , N2, հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ ԴԵՄ

ԱՇՈՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԼԻ ԱԼՈՅԱՆ

ՀՐԱՉԻԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ՂՈՒԿԱՍ ՂԱՐԻԲՅԱՆ

ՀԱԿՈԲ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՌՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ

2014 թվականի հուլիսի 21

գ. Արևիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---

«21» Հուլիսի 2014թ. թիվ 4- Ն

## ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ղուկաս Թադևոսի Ղարիբյանի 2014թ. հուլիսի 18 -ի դիմումը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել փոխադրելու Արևիկ համայնքի վարչական սահմաններում գտնվող Ղուկաս Ղարիբյանին սեփականության հանդիսացող գյուղ նշանակության հողամասի վրա կառուցված ինքնակամ շինության 224քմ ընդհանուր մակերեսով ծածկագրի 04-027-062-006 հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելու՝ կառուցապատում իրականացնելու նպատակով:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին / Գ. Ծատուրյան /՝ օրենքով սահմանված կարգով գործին ընթացք տալ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Բեգլարյան Աշոտ | | | |
| Մարկոսյան Տիգրան | | | |
| Ղարիբյան Ղուկաս | | | |
| Գրիգորյան Գագիկ | | | |
| Ալոյան Ալի | | | |
| Շահնազարյան Հակոբ | | | |
| Ասատրյան Հրաչիա | | | |

Համայնքի ղեկավար Գառնիկ Ծատուրյան

2014 թվականի հուլիս «21» գ. Արևիկի

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ... 04403544

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 21» ՀՈՒԼԻՍԻ 2014թ. թիվ 5-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բեգլարյան Աշոտ | | | |
| Ղարիբյան Ղուկաս | | | |
| Գրիգորյան Գագիկ | | | |
| Ալոյան Ալի | | | |
| Շահնազարյան Հակոբ | | | |
| Ասատրյան Հրաչիա | | | |
| Մարկոսյան Տիգրան | | | |

Համայնքի ղեկավար՝ Գ. Ծատուրյանյան

2014 թվականի հուլիսի «21»

Գ. Արևիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014Թ. ՀՈՒԼԻՍԻ 21-Ի ԹԻՎ 5
ՈՐՈՇՄԱՆ

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ
ՑՈՒՑԱԿ

| N | Անուն, Ազգանուն | Անձնագրի համարը, սերիան | Սոց. Քարտի համարը | հազ. դրամ | ստորագրություն |
|---|---|---|---|---|---|
| 1. | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԿԱՐԻՆԵ | AN0773227 | 5611740090 | 50.000 | |
| 2. | ՄԱՐՅԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ | AM0496328 | 6701790474 | 50.000 | |
| 3. | ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՅԿԱՆՈՒՇ | AF0645597 | 6602620177 | 50.000 | |
| 4. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱՄ | AF0639978 | 1809720338 | 50.000 | |
| 5 | ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԱՍՅԱ | AN0901035 | 6708550126 | 50.000 | |
| 6 | ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ | AN0707743 | 6501660221 | 50.000 | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | 300.000 | |

ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ԳԱՌՆԻԿ. ԾԱՏՈՒՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

## ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

«21» Հուլիսի 2014թ. թիվ 6- Ն

## ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014թվականի հուլիսի 21 -ի թիվ 2 , համայնքի ղեկավարի 2014թվականի հուլիսի 21-ի թիվ 88 –Ա որոշումները և ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Համաձայնություն տալ <<Արևիկի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի համար Արևիկ համայնքի ղեկավարի ներկայացրած Նարինե Բարսեղյանի թեկնածությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. ԲԵԳԼԱՐՅԱՆ ԱՇՈՏ | | | |
| 2. ՄԱՐԿՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | | |
| 3. ՂԱՐԻԲՅԱՆ ՂՈՒԿԱՍ | | | |
| 4 . ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱԳԻԿ | | | |
| 5. ԱԼՈՅԱՆ ԱԼԻ | | | |
| 6. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀԱԿՈԲ | | | |
| 7. ԱՍԱՏՐՅԱՆ ՀԱՉԻԱ | | | |

Համայնքի ղեկավար՝ Գառնիկ Ծատուրյան

2014 թվականի հուլիս «21»

գ. Արևիկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 21 » ՀՈՒԼԻՍԻ 2014թ. Թիվ 7 -Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ա. Համաձայն <<ՏԻՄ>>-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների՝ ջրամատակարարման, աղբահանության և այլ ծառայությունների իրականացման համար համայնքում ձևակերպել հետևյալ հաստիքները՝

1. Խմելաջրի ջրամատակարումն ապահովելու և գանձումներն իրականացնելու պատասխանատու՝ 1 միավոր 85500 դրամ

2. Խմելաջրի ջրամատակարարման սանիտարական վիճակի, ինչպես նաև վթարների հայտնաբերման և աշխատանքների կատարման հսկողությունն իրականացնելու համար՝ 1 միավոր 74000 դրամ:

3. Համայնքի աղբահանության աշխատանքների կատարման համար՝ 1 միավոր 66200 դրամ

4. Աղբահանություն կատարելու՝ աղբը տեղափոխելու համար տրակտորիստ՝ 1 միավոր 66200 դրամ, որն աշխատանքները կատարելու է իր սեփական տրակտորով:

5. Պաշտոնական գրությունների և փաստաթղթերի իրավական հիմքերին համապատասխանությունն ապահովելու համար իրավաբան՝ 1 միավոր 71000 դրամ:

6. Գազի կաթսայի շահագործման և անխափան աշխատանքն ապահովելու համար ՝ 1 միավոր 66200 դրամ:

Վերոնշված հաստիքներում աշխատող անձանց հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

բ. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ ԴԵՄ

ԱՇՈՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԼԻ ԱԼՈՅԱՆ

ՀՐԱՉԻԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ՂՈՒԿԱՍ ՂԱՐԻԲՅԱՆ

ՀԱԿՈԲ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՌՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ

2014 թվականի հուլիսի 21

գ. Արևիկ